ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2018 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) 19-րդ կետի 2-րդ պարբերությունում «անձանց» բառից հետո լրացնել «(բացառությամբ փոխկապակցված անձանց՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր)» բառերը.

2) 23-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով կաթիլային համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000- ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքներն պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների և բանջարեղենի մշակության դեպքում անտոկոս փոխառության տեսքով տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով 1 500 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքներն պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.»,

բ. 6-րդ ենթակետի «բ» պարբերությունում «3-րդ ենթակետի» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի» բառերով, իսկ «4-րդ ենթակետով» բառերը՝ «5-րդ ենթակետով» բառերով,

գ. 10-րդ ենթակետում «7-րդ ենթակետում» բառերը փոխարինել «8-րդ ենթակետում» բառերով.

3) N 3 ձևից հանել «ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
4.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2018 թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է որոշմամբ հաստատված Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում ոռոգման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկներ, ծխախոտ և բանջարեղեն մշակող հողօգտագործողների կողմից ծրագրից օգտվելու համար ֆինանսական միջոցների (անտոկոս փոխառության տեսքով տրամադրվող) առավելագույն սահմանաչափ սահմանելու, ինչպես նաև փոխկապակցված անձանց կողմից ծրագրից օգտվելու նպատակով գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու պարտադիր պայմանից ազատելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրով կաթիլային ոռոգման համակարգով նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկ և ծխախոտ մշակելու նպատակով ոռոգման կաթիլային համակարգի արժեքի 50 տոկոսը տրամադրվում է անհատույց, իսկ 50 տոկոսը անտոկոս փոխառության տեսքով, իսկ երեք և բարձր տարիքի բազմամյա տնկարկ և բանջարեղեն մշակելու դեպքում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառություն: Այդ թվում գործող որոշմամբ սահմանված է, որ նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով կաթիլային համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց տրամադրվում է 750 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասը ձևակերպվում է որպես անտոկոս փոխառություն, այսինքն սահմանված է միայն անհատույց տրամադրվող ֆինանսական միջոցների առավելագույն սամանաչափը:

Ծրագրով սահմանված է, որ մեկ ամբողջություն կազմող միավոր տարածքում գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ մի քանի անձանց գույքային իրավունքների առկայության պայմաններում՝ այդ անձինք կարող են օգտվել պետական աջակցությունից միայն գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու դեպքում: Տվյալ դրույթը նպատակահարմար չէ կիրառել փոխկապակցված անձանց պարագայում:

Նպատակը և բնույթը

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նպատակն է կաթիլային ոռոգման համակարգի տեղադրման նպատակով տրամադրվող պետական աջակցության ստացման համարփոխկապակցված անձանց կողմից ծրագրից օգտվելու նպատակով գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու պարտադիր պայմանից ազատելն է, ինչպես նաև տրամադրվող ֆինանսական միջոցների (անտոկոս փոխառության տեսքով տրամադրվող) առավելագույն սահմանաչափ սահմանելը, ինչը հնարավորություն կընձեռի

նախատեսված ֆինանսական միջոցներով պետական աջակցություն տրամադրել հնարավորինս շատ հողօգտագործողներին:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կստեղծվեն նախադրյալներ ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցներով պետական աջակցություն տրամադրել հնարավորինս շատ հողօգտագործողներին:

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի և իրավաբանական բաժինների կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՄԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժին

_____ ***Վ. Բալայան***

(ստորագրությունը)

«_____» _____ 2018 թ.